ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2014, 67, № 2-3, 76-78

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲՈՐԻՍ ԿԱՐԱՊԵՏԻ
(ծննդյան 90-ամյակին)



Ապրիլի 29-ին լրացավ բազմավաստակ գիտնական,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության և տեխնիկայի բնագավառում ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, Հայաստանի Պետական ճարտարապետության և շինարարության համալսարանի դասախոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ***Բորիս Կարապետի Կարապետյանի*** 90-ամյակը:

Բ. Կարապետյանը ծնվել է Պյատիգորսկում 1914թ.: 1929թ. նրա ընտանիքը տեղափոխվել է Հայաստան և բնակություն հաստատել Գորիսում, ապա, մեկ տարի անց՝ Երևանում: 1948թ. Բ.Կարապետյանը գերազանցությամբ ավարտում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» ֆակուլտետը, ստանալով ճարտարագետ-շինարարի մասնագիտություն, և ընդունվում ՀԽՍՀ ԳԱ Շինանյութերի և շինարարական կառուցվածքների գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրա:

1954թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը և ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, շարունակում է աշխատել նշված ինստիտուտում կրտսեր գիտաշխատողի, ավագ գիտաշխատողի և ապա բաժնի վարիչի պաշտոններում:

Լինելով երջանկահիշատակ Արմենակ Նազարովի ասպիրանտը և հետևելով նրա կողմից ստեղծված գիտական հարուստ ավանդույթներին, Բ.Կարապետյանը 1961թ. տեղափոխվել է Լենինական (Գյումրի) և ակադեմիկոս Ա.Նազարովի հետ համատեղ ձեռնամուխ եղել հանրապետության երկրորդ քաղաքում Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի կազմավորման և նոր կոլեկտիվի ձևավորման շնորհակալ աշխատանքին: Նրա անմիջական մասնակցությամբ ինստիտուտը հասավ զգալի գիտական նվաճումների և նշված ասպարեզներում ճանաչվեց որպես նախկին ԽՍՀՄ-ում առաջատարներից մեկը:

1961-1971թթ. Բ.Կարապետյանը ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի ինժեներային սեյսմաբանության բաժինը:

1964թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը, իսկ 1970 թ. ստացել պրոֆեսորի կոչում:

1966-1971թթ. Բ.Կարապետյանը Սեմիպալատինսկում ղեկավարել է միջուկային պայթյունների ժամանակ շենքերի և կառուցվածքների վարքագծի ուսումնասիրման աշխատանքները:

Նրա կողմից մանրամասն ուսումնասիրվել են 1949թ. Բյուրականի, 1968թ. Քաջարանի և 1988թ. Սպիտակի երկրաշարժերի ազդեցությունները քաղաքացիական և արդյունաբերական կառույցների վրա:

1971-1974թթ. Բ.Կարապետյանը դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ 1974-1980թթ. զբաղեցրել է ՀԽՍՀ Պետշինի շինանյութերի և շինարարական կառուցվածքների հայկական գիտահետազոտական ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը:

1981–1994թթ. Բ.Կարապետյանը զբաղեցրել է Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Երկաթբետոնե, քարե կոնստրուկցիաների և կառուցվածքների սեյսմակայունություն» ամբիոնի վարիչի պաշտոնը:

1990թ. Բ.Կարապետյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1994-2001թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Երկրի մասին գիտություններ պրոբլեմային գիտական խորհրդի նախագահը, «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի գլխավոր խմբագիրը:

Բ.Կարապետյանը շուրջ 200 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «Բազմաճոճանակ սեյսմոմետրերը և նրանց կիրառումը ինժեներային սեյսմոլոգիայում», «Հայաստանում կառուցված շենքերի տատանումները» և իր քրոջ՝ Նադեժդա Կարապետյանի հետ համահեղինակությամբ գրված «Ինժեներային սեյսմոլոգիայի և շինարարական կոնստրուկցիաների մատենագիտական տեղեկատու» մենագրությունները և ուրիշ բազմաթիվ մեծարժեք գիտական աշխատություններ, որոնք մինչ օրս մնում են արդիական: Բ.Կարապետյանի մի շարք գիտական հոդվածներ հրատարակված են հանրապետական և միջազգային մամուլում:

Բ.Կարապետյանի գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը ուղղված է եղել սեյսմակայուն շինարարության և ինժեներային սեյսմաբանության ժամանակակից, մասնավորապես՝ փորձարարական հիմնախնդիրների լուծմանը, բարձրորակ մասնագետների և գիտական կադրերի պատրաստմանը: Ղեկավարել է 16 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսական աշխատանքներ:

Հայրենական գիտության նվաճումները նա հաջողությամբ ներկայացրել է բազմաթիվ միջազգային գիտաժողովներում (Ճապոնիա, Բուլղարիա, Հունգարիա, Թուրքիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ֆրանսիա), ընտրվել է ԱՄՆ Սեյսմաբանական ընկերու-

թյան անդամ (1987թ.), Ֆրանսիայի «Արարատ» Միգազգային ակադեմիայի թղթակից անդամ (1993թ.):

Ակադեմիկոս Բ.Կարապետյանն իր բազմաբեղուն գիտական, գիտակազմակերպչական և մանկավարժական գործունեության համար պարգևատրվել է մի շարք կառավարական պարգևներով, մրցանակներով և դիպլոմներով: Դեռևս 1974թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ Պետական մրցանակ գիտության և տեխնիկայի ասպարեզում, նա նաև ԱՄՆ հայկական գիտական և ճարտարագիտական ընկերության Վ. Համբարձումյանի անվան մրցանակի դափնեկիր է:

Ակադեմիկոս Բ.Կարապետյանը 1941-45թթ. Հայրենական մեծ պատերազմի վետերան է:

Բորիս Կարապետյանին բնորոշ է առաջին հերթին բարձր կուլտուրան և ինտելեկտը, լայն էրուդիցիան և սթափ միտքը, սկզբունքայնությունն ու մարդկանց նկատմամբ հարգալից, բարյացկամ վերաբերմունքը:

Ջերմորեն շնորհավորում ենք Բորիս Կարապետի Կարապետյանին, գիտության նվիրյալ գործչին, ազնիվ քաղաքացուն, համեստ և բարեկիրթ մտավորականին 90-ամյա հոբելյանի առթիվ և մաղթում առողջություն ու ստեղծագործական երկարակեցություն:

ՀՀ ԳԱԱ Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» Տեղեկագրի խմբագրություն